**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 05.04.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2021/13

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Մոսինյանի,
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 04.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

# ՊԱՐԶԵՑ

## 1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Այրվածքաբանոիության Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարելու «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ի թիվ 3 նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով հաստատված և հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստում որպես «Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր» գնահատելու որոշումը՝

ա) մրցույթի մասնակիցներ «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի և «Ռիտա Գասպարյան» ԱՁ-ի կողմից Հրավերի թիվ 8-րդ և 61-63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկ»-ների մասերով;

բ) մրցույթի մասնակից «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից հրավերի թիվ 10-14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկ»-ի մասով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 04.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3186-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 04.03.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

04.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/13 համարի ծածկագիրը:

11.03.2021թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Խաչպար» ՍՊԸ-ն 11.03.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

11.03.2021թ.-ին, 19.03.2021թ.-ին, 26.03.2021թ.-ին, 01.04.2021թ.-ին և 05.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 01.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.04.2021թ.-ին:

**2. <u>«Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն 04.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ն <<Բժշկական պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2021թ. հունվարի 29-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվող թվով 65 ապրանքներից բողոքարկում ենք թիվ 8-րդ, 10 - 14-րդ և 61 - 63-րդ չափաբաժինները (կից փաստաթուղթ թիվ 2), որոնց <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ի Հավելված թիվ 1-ի <<անվանումը>> և <<տեխնիկական բնութագիրը>> սյունակներով թիվ 8-րդի մասով պահանջվում է << Բժշկական թանզիֆ /մառլյա/ 5մ,>> ապրանքը, թիվ 10 - 14-րդի մասերով պահանջվում են տարբեր չափսերի <<Բժշկական ձեռնոցներ...Ստերիլ, լատեքսից....>> ապրանքները, իսկ թիվ 61 - 63-րդ մասերով պահանջվում են տարբեր չափսերի և ստերիլության <<Վիրակապ...>>-եր (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-2):*

*<<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը 2021թ. մարտի 1-ին կայացած թիվ 3 նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով որոշել է՝ << 3. Հաստատել Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: >> (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-4) և հրապարակել է <<ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ պայմանագիր կնքելու որոշման մասին>> տեքստը, որտեղ մեր կողմից բողոքարկվող թիվ 8-րդ, 10 - 14-րդ և 61 – 63-րդ չափաբաժինների բոլոր մասնակիցների հայտերը գնահատել է որպես՝ <<Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր>> (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1-14), այն դեպքում, երբ՝*

*ա) Հրավերի թիվ 8-րդի մասով պահանջվող << Բժշկական թանզիֆ /մառլյա/ 5մ,>> ապրանքի համար մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի և <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի կողմից,*

*բ) Հրավերի թիվ 10 - 14-րդի մասերով պահանջվող տարբեր չափսերի <<Բժշկական ձեռնոցներ...Ստերիլ, լատեքսից....>> ապրանքների համար մրցույթի մասնակից <<Լեյկո>> ՍՊԸ- կողմից,*

*գ) Հրավերի թիվ 61 - 63-րդ մասերով պահանջվող փարբեր չափսերի և ստերիլության <<Վիրակապ ...>>-եր ապրանքների համար մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի և <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի կողմից*

*ներկայացված <<Գնային առաջարկ>>-ներում (կից ներկայացնում ենք այդ գնային առաջարկների PDF փարբերակները) հաշվարկված և ներառված են ԱԱՀ-ի մեծությունները, որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին՝ այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:*

*<<ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն>> ՍՊԸ-ն համաձայն չէ այդ որոշման հետ և ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 1-ին կայացած թիվ 3 նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով հաստատված և հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստում մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի, <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի և <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 8-րդ, 10 - 14-րդ և 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված <<Գնային առաջարկ>>-ներում ԱԱՀ-ի մեծությունները հաշվարկված և ներառված լինելը որպես <<Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր>> գնահատելու որոշումը՝ Հրավերի թիվ 8-րդ, 10 - 14-րդ և 61 – 63-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝*

*Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի << ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ -ի <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չեղյալ հայտարարելու <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ի թիվ 3 նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով հաստատված և հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստում որպես <<Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր>> գնահատելու որոշումը՝*

*ա) մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի և <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի կողմից Հրավերի թիվ 8-րդ և 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված <<Գնային առաջարկ>>-ների մասերով;*

*բ) մրցույթի մասնակից <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 10 - 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված <<Գնային առաջարկ>>-ի մասով:*

*5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝*

*Համաձայն <<ԳՆումների մասին>> ՀՀ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝*

*<<1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: .....>>, որոնցից սույն բողոքին առընչվում են հետևյալ իրավական ակտերը՝*

*Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝*

- *ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է,*

*Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝*

- *ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկա-կան կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:*

*Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է ՀՀ Կառավարությունը:*

*1) Բողոքարկվող թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվում են տարբեր չափսերի <<Բժշկական ձեռնոցներ...Ստերիլ,լատեքսից....>> ապրանքները, որոնք՝*

*ա) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ բժշկական նշանակության ապրանքները ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝*

*<<2) ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:>>*

*Մասնավորապես՝ նույն հավելվածի ցանկի 32-րդ կետի համաձայն՝ << 32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ>> անվանումներով ապրանքները դասվում են բժշկական նշանակության ապրանքների թվին:*

*բ) Ինտերնետային <<Վիկիպեդիա-ազատ հանրագիտարան>>-ում առկա է <<Բժշկական ձեռնոցներ>> վերնագրով տեղեկատվություն, որտեղ նկարագրված է, թե ինչ նյութերից են պատրաստվում բժշկական ձեռնոցները (կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1-3):*

*Վերոգրյալ իրավական ակտերը և փաստաթղթերը ապացուցում են, որ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող լատեքսից պատրաստված տարբեր չափսերի ստերիլ բժշկական ձեռնոցները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, ինչը նշանակում է, որ այդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար <<ԱԱՀ>> հարկատեսակ հաշվարկել, այսինքն՝ մրցույթի մասնակից <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում Հրավերի թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ԱԱՀ հաշվարկելը և ներկայացնելը չի համապատասխանում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին:*

*2) Բողոքարկվող թիվ 8-րդ չափաբաժնի մասվ պահանջվում է <<Բժշկական թանզիֆ... Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր...>> ապրանքը, իսկ թիվ 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվում են տարբեր չափսերի և ստերիլության <<Վիրակապ ....>>-եր ապրանքները, որոնք՝*

*ա) Համաձայն ՀՀ կողմից 2016թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) թիվ 101 որոշումով հաստատված՝ <<Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ>>-ի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման, ընդգրկված են 3005 ծածկագրին պատկանող՝ <<3005 Բամբակ, թանզիֆ, փաթույթային վիրակապեր եւ նմանատիպ արտադրատեսակներ (օրինակ՝ վիրակապական նյութեր, կպչուն սպեղանիներ, թրջոցալաթեր)՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում, որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար>> 3005 90 310 ծածկագրով ապրանքների ցանկում (կից փաստաթուղթ թիվ 7):*

*բ) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում ընդգրկված են ախտորոշման, կանխարգել-ման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքները, որոնք՝*

*1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին>>*

*Վերոգրյալ իրավական ակտերը ապացուցում են, որ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող <<Բժշկական թանզիֆ... Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր...>> ապրանքը, և 61 - 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող տարբեր չափսերի և ստերիլության <<Վիրակապ ....>>-եր ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, ինչը նշանակում է, որ այդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար <<ԱԱՀ>> հարկատեսակ հաշվարկել, այսինքն՝ մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի և <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի կողմից գնային առաջարկներում Հրավերի թիվ 8-րդ և 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ԱԱՀ հաշվարկելը և ներկայացնելը չի համապատասխանում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին:»:*

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Այրվածքաբանոիթյան Ազգային Կենտրոն» ՓԲԸ-ի «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարելու «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ի թիվ 3 նիստի արձանագրության թիվ 3-րդ կետով հաստատված և հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստում որպես «Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր» գնահատելու որոշումը՝

ա) մրցույթի մասնակիցներ «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի և «Ռիտա Գասպարյան» ԱՁ-ի կողմից Հրավերի թիվ 8-րդ և 61-63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկ»-ների մասերով;

բ) մրցույթի մասնակից «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից հրավերի թիվ 10-14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված «Գնային առաջարկ»-ի մասով:

**3. <u>«Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 04.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3247-2021 գրությամբ դիմել է «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 18.03.2021թ.-ի թիվ ԱԱԿ-50-21 գրությամբ, ներկայացնելով բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, գրավոր դիրքորոշում չի հայտնել:

**4. <u>Երրորդ անձ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ն 11.03.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 11.03.2021թ.-ին, 26.03.2021թ.-ին և 01.04.2021թ.-ին հրավիրված նիստերին, 29.03.2021թ.-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

*«Ձեր կողմից քննվող <<ԳԲՔԱ-ԼՕ-2021/13>> բողոքի վերաբերյալ ներկայացնում եմ իմ դիրքորոշումները՝ ըստ չափաբաժինների՝*

*1) Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով՝*

*Բողոքարկվող թիվ 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքի համար Հրավերի Հավելված թիվ 6-ի՝ <<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> -ի Հավելված թիվ 1-ի՝ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ի <<անվանումը>> սյունակում գրված է <<....Բժշկական թանզիֆ... >> անվանումը, իսկ <<տեխնիկական բնութագիրը>> սյունակում գրված են <<Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր...>> պահանջները, այսինքն՝ Հրավերով պահանջվում է <<թանզիֆ>> անվանումով ապրանքի կոնկրետ չափսերով արտադրատեսակը (կից փաստաթուղթ թիվ 1, էջ՝ 1, արված նշումները):*

*ա) Եվրասիական տնտեսական միությունում(ԵԱՏՄ) բոլոր տեսակի ապրանքները դասակարգված են արտաքին տնտեսական գործունեության միասնական անվանացանկում (ԱՏԳ ԱԱ), որը հաստատվել է Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած թիվ 101 որոշմամաբ (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1 - 1623, որի մեծածավալ լինելու պատճառով այն փոխանցում ենք էլեկտրոնային տարբերակով):*

*բ) Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից պատրաստված ԱՏԳ ԱԱ <<Ապրանքների դասակարգում>> ձեռնարկի՝ ապրանքները խմբավորված են 97 խմբերում, որոնցից յուրաքանչյուր ապրանքային խումբ ունի իր երկնիշ թվային ծածկագիրը:*

*Այդ ապրանքային խմբերը բաժանվում են ապրանքային դիրքերի, որոնք հանդիսանում են ապրանքների դասակարգման խմբավորում և առանձնացվում են չորս թվային նիշերով: Ապրանքային դիրքերի կազմի մեջ կարող են առանձնացումներով լինել ենթադիրքեր և ստորաենթադիրքեր, որտեղ կարող են մտնել այդ դիրքերում գտնվող ապրանքները և նրանցից պատրաստվող արտադրատեսակները, որոնք ունենում են վեց և ավելի թվային նիշեր (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1 - 4, արված նշումները):*

*Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնով պահանջվող <<....թանզիֆ... Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր...>> ապրանքը ընդգրկված է ԱՏԳ ԱԱ-ի թիվ 547-րդ էջում գտնվող 3005 քառանիշ ծածկագիրն ունեցող ապրանքային դիրքում ներառված ապրանքների ցանկում՝ <<...., թանզիֆ, ..... մանրածախ վաճառքի համար .... փաթեթվածքներում բաժնեծրարված, նախատեսված բժշկության, վիրաբուժության, ..... մեջ օգտագործելու համար՝ >> , ինչպես նաև 3005 քառանիշ ծածկագիրն ունեցող ապրանքային դիրքի 3005 90 310 0 ենթադիրքում՝ <<- - - - թանզիֆ եւ թանզիֆից արտադրատեսակներ >> (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):*

*ԱՏԳ ԱԱ-ի որևէ այլ խմբում, որևէ այլ ապրանքային դիրքում կամ ենթադիրքում <<Թանզիֆ>> անվանումով ապրանք, կամ թանզիֆից պատրաստված արտադրատեսակ գոյություն չունի, այն առկա է միայն 3005 ապրանքային դիրքում:*

*գ) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում ընդգրկված են ախտորոշման, կանխար-գելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքները, որոնք՝*

*1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին>>*

*Վերոգրյալ իրավական ակտերը ապացուցում են, որ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող <<Բժշկական թանզիֆ... Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր...>> ապրանքը գտնվում է ԱՏԳ ԱԱ 3005 ապրանքային դիրքում, որն ընդգրկված է ՀՀ կառավարության թիվ 1317-Ն որոշմամբ հաստատված՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, ինչը նշանակում է, որ այդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքը ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար <<ԱԱՀ>> հարկատեսակ հաշվարկել, այսինքն՝ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի և <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի կողմից գնային առաջարկներում Հրավերի թիվ 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող <<Բժշկական թանզիֆ... Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր...>> ապրանքի համար ԱԱՀ հաշվարկելը և ներկայացնելը չի համապատասխանում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին:*

*2) Հրավերի թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով՝*

*Բողոքարկվող թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար Հրավերի Հավելված թիվ 6-ի՝ <<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> -ի Հավելված թիվ 1-ի՝ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ի <<անվանումը>> սյունակներում գրված է միևնույն՝ <<Բժշկական ձեռնոցներ... >> անվանումը, իսկ <<տեխնիկական բնութագիրը>>*

*սյունակներում գրված է միևնույն՝ <<Ստերիլ, լատեքսից....>> պահանջը, որոնք միմյանցից տարբերվում են միայն ձեռնոցների չափսերով (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1 - 2, արված նշումները):*

*ա) Համաձայն ՀՀ ԱՆ 2013թ. հոկտեմբերի 11-ի թիվ 2718-Ա հրամանով հաստատված «ՁԵՌՆՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ» (կից փաստաթուղթ թիվ 5, որի մեծածավալ լինելու պատճառով այն փոխանցում ենք էլեկտրոնային տարբերակով) մեթոդական ուղեցույցի հավելվածի թիվ 5-րդ բաժնի տվյալների՝ <<11. Բժշկական ձեռնոցներն ավանդաբար պատրաստվում են լատեքսից:>>, <<Լատեքսից ձեռնոցներ պատրաստելու համար օգտագործվում է բնական լատեքս, որն արտադրվում է կաուչուկատու բույսի կաթնահյութից:>> (կից փաստաթուղթ թիվ 5, էջ՝ 9), <<Լատեքսի խտանյութը պարունակում է 60% ռետին >>, <<Ներկայումս բժշկական ձեռնոցների արտադրության համար օգտագործվում են տարբեր պոլիմերային նյութեր՝ նեոպրեն, պոլիուրետան, վինիլ և նիտրիլ: >> (կից փաստաթուղթ թիվ 5, էջ՝ 10), բժշկական ձեռնոցներն ավանդաբար պատրաստվում էին բնական լատեքսից, որն իր մեջ պարունակում է 60 % ռետին, այսինքն՝ դրանք ռետինից պատրաստված ձեռնոցներ են, որոնք կիրառվում են բոլոր բուժաշխատողների՝ այդ թվում նաև վիրաբույժների կողմից, որոնք վիրահատությունների ժամանակ օգտագործում են բացառապես ստերիլ ձեռնոցները:*

*Համաձայն ՀՀ ԱՆ 2013թ. հոկտեմբերի 11-ի թիվ 2718-Ա հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցի հավելվածի թիվ 6-րդ բաժնի սահմանումների, բժշկական ձեռնոցները դասակարգվում են ըստ պատրաստման նյութերի, ըստ նշանակության և կիրառման ոլորտների, ըստ ձևերի, ըստ մակերեսի բնույթի և ըստ նախնական մանրէազերծման վիճակի >> (կից փաստաթուղթ թիվ 5, էջ՝ 11):*

*Վերոգրյալ սահմանումները փաստում և հաստատում են, որ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող միևնույն <<Բժշկական ձեռնոցներ... >> անվանումով միևնույն՝ <<Ստերիլ, լատեքսից....>> տեխնիկական բնութագրերով ապրանքները հանդիսանում են բնական լատեքսից ստացված ռետինե ձեռնոցներ, որոնք մանրէազերծված են և հանդիսանում են տարբեր չափսերի ստերիլ ռետինե վիրաբուժական ձեռնոցներ:*

*բ) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի*

*3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում ընդգրկված են՝ <<3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝*

*<<2) ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:>>*

*Համաձայն այդ հավելվածի ցանկի 32-րդ կետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում ընդգրկված են*

*<< 32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ>> անվանումներով ապրանքները:*

*Վերոգրյալ իրավական ակտերը և փաստաթղթերը ապացուցում են, որ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող տարբեր չափսերի միևնույն <<Բժշկական ձեռնոցներ... >> անվանումով միևնույն՝ <<Ստերիլ, լատեքսից....>> ապրանքները հանդիսանում են տարբեր չափսերի ստերիլ ռետինե վիրաբուժական ձեռնոցներ, որոնք ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, ինչը նշանակում է, որ այդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար <<ԱԱՀ>> հարկատեսակ հաշվարկել, այսինքն՝ մրցույթի մասնակից <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում Հրավերի թիվ 10 – 14-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար, որոնք հանդիսանում են տարբեր չափսերի ստերիլ ռետինե վիրաբուժական ձեռնոցներ, ԱԱՀ հաշվարկելը և ներկայացնելը չի համապատասխանում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին:*

*3) Հրավերի թիվ 61 – 63-րդ չափաբաժիններնի մասերով՝*

*Բողոքարկվող թիվ 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար Հրավերի Հավելված թիվ 6-ի՝ <<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> -ի Հավելված թիվ 1-ի՝ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ի <<անվանումը>> սյունակում գրված է միևնույն՝ <<Վիրակապ....>> անվանումը, իսկ <<տեխնիկական բնութագիրը>> սյունակներում գրված են պահանջվող <<Վիրակապ>> անվանումը ունեցող ապրանքի չափսերին և ստերիլությանը վերաբերվող պահանջները, այսինքն՝ Հրավերով*

*պահանջվում է <<Վիրակապ>> անվանումը ունեցող ապրանքի կոնկրետ չափսերով արտադրատեսակները (կից փաստաթուղթ թիվ 1, էջ՝ 2, արված նշումները):*

*ա) Եվրասիական տնտեսական միությունում(ԵԱՏՄ) բոլոր տեսակի ապրանքները դասակարգված են արտաքին տնտեսական գործունեության միասնական անվանացանկում (ԱՏԳ ԱԱ), որը հաստատվել է Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած թիվ 101 որոշմամաբ (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1 - 1623, որի մեծածավալ լինելու պատճառով այն փոխանցում ենք էլեկտրոնային տարբերակով):*

*բ) Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից պատրաստված ԱՏԳ ԱԱ <<Ապրանքների դասակարգում>> ձեռնարկի՝ ապրանքները խմբավորված են 97 խմբերում, որոնցից յուրաքանչյուր ապրանքային խումբ ունի իր երկնիշ թվային ծածկագիրը: Այդ ապրանքային խմբերը բաժանվում են ապրանքային դիրքերի, որոնք հանդիսանում են ապրանքների դասակարգման խմբավորում և առանձնացվում են չորս թվային նիշերով: Ապրանքային դիրքերի կազմի մեջ կարող են առանձնացումներով լինել ենթադիրքեր և ստորաենթադիրքեր, որտեղ կարող են մտնել այդ դիրքերում գտնվող ապրանքները և նրանցից պատրաստվող արտադրատեսակները, որոնք ունենում են վեց և ավելի թվային նիշեր (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1 - 4, արված նշումները):*

*Հրավերի թիվ 61 – 63-րդ չափաբաժիններնի մասերով պահանջվող <<Վիրակապ>> անվանումը ունեցող ապրանքը ընդգրկված է ԱՏԳ ԱԱ-ի թիվ 547-րդ էջում գտնվող 3005 քառանիշ ծածկագիրն ունեցող ապրանքային դիրքում ներառված ապրանքների ցանկում՝ <<...., փաթույթային վիրակապեր, ..... մանրածախ վաճառքի համար .... փաթեթվածքներում բաժնեծրարված, նախատեսված բժշկության, վիրաբուժության, ..... մեջ օգտագործելու համար՝ >>, ինչպես նաև 3005 քառանիշ ծածկագիրն ունեցող ապրանքային դիրքի 3005 10 000 0 ենթադիրքում՝ <<....վիրակապական,.... արտադրատեսակներ >> (կից փաստաթուղթ թիվ 6, արված նշումները):*

*ԱՏԳ ԱԱ-ի որևէ այլ խմբում, որևէ այլ ապրանքային դիրքում կամ ենթադիրքում <<Վիրակապ>> անվանումով ապրանք, կամ <<Վիրակապ>> -ից պատրաստված արտադրատեսակ գոյություն չունի, այն առկա է միայն 3005 ապրանքային դիրքում:*

*գ) Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով*

*ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում ընդգրկված են ախտորոշման, կանխար-գելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքները, որոնք՝*

*1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին>>*

*Վերոգրյալ իրավական ակտերը ապացուցում են, որ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող՝ տարբեր չափսերի և ստերիլության, <<Վիրակապ>> անվանումը ունեցող ապրանքը ընդգրկված է ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում, ինչը նշանակում է, որ այդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքը ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար <<ԱԱՀ>> հարկատեսակ հաշվարկել, այսինքն՝ <<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ- ԲՆԱ-21/04>> ծածկագրով մրցույթի մասնակիցներ <<ԷՖԲԻԷՅ>> ՍՊԸ-ի և <<Ռիտա Գասպարյան>> ԱՁ-ի կողմից գնային առաջարկներում Հրավերի թիվ 61 – 63-րդ չափաբաժինների մասերով պահանջվող՝ տարբեր չափսերի և ստերիլության, <<Վիրակապ>> անվանումը ունեցող ապրանքի համար ԱԱՀ հաշվարկելը և ներկայացնելը չի համապատասխանում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին:»:*

**5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 26.01.2021թ.-ին հայտարարվել է «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ն, «Լեյկո» ՍՊԸ-ն, «Էֆբիէյ» ՍՊԸ-ն և «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.03.2021թ.-ի կայացրած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝

8-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն:

10-ից 14-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Լեյկո» ՍՊԸ-ն:

61-ից 63-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն:

iv. www.gnumner.am կայքում 02.03.2021թ.-ին հրապարակված «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվության համաձայն՝

8-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն:

10-ից 14-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Լեյկո» ՍՊԸ-ն:

61-ից 63-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն:

v. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 8-րդ, 10-ից 14-րդ և 61-ից 63-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է ձեռքբերել հետևյալ ապրանքները.

8-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բժշկական թանզիֆ /մարլյա/ 5մ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Թելիլայնությունը 40S գործվացաքի խտությունը 26x18, 100% բամբակ: Երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«տուփ»*: Ընդհանուր քանակը՝ *«5000»* հատ:

10-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բժշկական ձեռնոցներ N 6.5»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստերիլ, միջինչափի, լատեքսից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«զույգ»*: Ընդհանուր քանակը՝ *«1000»* հատ:

11-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բժշկական ձեռնոցներ N 7.0»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստերիլ, լատեքսից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«զույգ»*: Ընդհանուր քանակը՝ *«1000»* հատ:

12-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բժշկական ձեռնոցներ N 7.5»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստերիլ, լատեքսից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«զույգ»*: Ընդհանուր քանակը՝ *«1000»* հատ:

13-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բժշկական ձեռնոցներ N 8.0»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստերիլ, լատեքսից: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«զույգ»*: Ընդհանուր քանակը՝ *«1000»* հատ:

14-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բժշկական ձեռնոցներ N 8.5»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստերիլ, լատեքսից:Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«զույգ»*: Ընդհանուր քանակը՝ *«1000»* հատ:

61-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Վիրակապ 5.10»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«5*10 Ոչ ստերիլ Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«փուփ»*: Ընդհանուր քանակը՝ *«10000»* հատ:

62-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Վիրակապ 7.14 ստ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«7*14 ստերիլ Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«փուփ»*: Ընդհանուր քանակը՝ *«2000»* հատ:

62-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Վիրակապ 7.14 ոչ ստ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝

*«7*14 Ոչ ստերիլ: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայությունը:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ: Չափման միավորը՝ *«տուփ»*: Ընդհանուր քանակը՝ *«20000»* հատ:

vi. Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 8-րդ, 10-ից 14-րդ և 61-ից 63-րդ չափաբաժինների մասով Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

«ԷՖԲԻԷյ» ՍՊԸ

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (նքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| **8** | Բժշկական թանզիֆ /մարլյա/ 5մ | 5 208 333.33 հինգ միլիոն երկու հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուն երեք լումա | 1 041 666.67 մեկ միլիոն քառասունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսուն վեց լումա | 6 250 000.00 վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ |
| **61** | Վիրակապ 5.10 | 1 041 666.67 մեկ միլիոն քառասունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսուն վեց լումա | 208 333.33 երկու հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուն երեք լումա | 1 250 000.00 մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ |
| **62** | Վիրակապ 7.14 ստ | 358 333.33 երեք հարյուր հիսունութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուն երեք լումա | 71 666.67 յոթանասունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսուն վեց լումա | 430 000.00 չորս հարյուր երեսուն հազար դրամ |
| **63** | Վիրակապ 7.14 ոչ ստ | 3 083 333.33 երեք միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուն երեք լումա | 616 666.67 վեց հարյուր աասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսուն վեց լումա | 3 700 000.00 երեք միլիոն յոթ հարյուր հազար դրամ |

«Ռիտա Գասպարյան» Ա/Ձ

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (նքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| **8** | Բժշկական թանզիֆ /մարլյա/ 5մ, տուփ | 2125000 Երկու միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար | 425000 Չորս հարյուր քսանհինգ հազար | 2550000 Երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար |
| **61** | Վիրակապ 5.10 Ոչ ստերիլ հատ, հատ | 500000 Հինգ հարյուր հազար | 100000 Մեկ հարյուր հազար | 600000 Վեց հարյուր հազար |
| **62** | Վիրակապ 7.14 ստ, հատ | 186666.67 Մեկ հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական | 37333.33 Երեսունյոթ հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 224000 Երկու հարյուր քսանչորս հազար |
| **63** | Վիրակապ 7.14 ոչ ստ, հատ | 1833333.33 Մեկ միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 366666.67 Երեք հարյուր վաթսունվեց հազար Վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյ ուրերորդական | 2200000 Երկու միլիոն երկու հարյուր հազար |

«Լեյկո» ՍՊԸ

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (նքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| **10** | Բժշկական ձեռնոցներ N 6.5, զույգ | 116666.67 Մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական | 23333.33 Քսաներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 140000 Մեկ հարյուր քառասուն հազար |
| **11** | Բժշկական ձեռնոցներ N 7.0, զույգ | 116666.67 Մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյ ուրերորդական | 23333.33 Քսաներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 140000 Մեկ հարյուր քառասուն հազար |
| **12** | Բժշկական ձեռնոցներ N 7.5, զույգ | 116666.67 Մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյ ուրերորդական | 23333.33 Քսաներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 140000 Մեկ հարյուր քառասուն հազար |
| **13** | Բժշկական ձեռնոցներ N 8.0, զույգ | 116666.67 Մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյ ուրերորդական | 23333.33 Քսաներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 140000 Մեկ հարյուր քառասուն հազար |
| **14** | Բժշկական ձեռնոցներ N 8.5, զույգ | 116666.67 Մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյ ուրերորդական | 23333.33 Քսաներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական | 140000 Մեկ հարյուր քառասուն հազար |

## 6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 26.01.2021թ.-ին հայտարարված «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 2-ով՝ գնային առաջարկում սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է գնային առաջարկի 4-րդ սյունակում:

ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանվել են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական պարագաների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը, որի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման,

անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին,

2) ներառված են սույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:

Բժշկական նշանակության ապրանքների ցանկի 31-րդ և 32-րդ կետերով նշված է՝ տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ, տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասին» 18.10.2016թ.-ի թիվ 101 որոշմամբ նախատեսված ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով սահմանված դիրքում ընդգրկված է հետևյալ ապրանքատեսակը՝ բամբակ, թանզիֆ, փաթույթային վիրակապեր և նմանատիպ արտադրատեսակներ (օրինակ՝ վիրակապական նյութեր, կպչուն սպեղանիներ, թրջոցալաթեր)՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում, որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 26.01.2021թ.-ին հայտարարված «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լեյկո» ՍՊԸ-ն և «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 01.03.2021թ.-ի կայացրած նիստի թիվ 3 արձանագրության հիման վրա մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել են 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Մասնավորապես՝ «Լեյկո» ՍՊԸ-ն 10-ից 14-րդ չափաբաժինների մասով, իսկ «Ռիտա Գասպարյան» Ա/Ձ-ն 8-րդ ու 61-ից 63-րդ չափաբաժինների մասով:

8-րդ ու 61-ից 63-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Էֆբիէյ» ՍՊԸ-ն:

Հավելված 1-ով՝

8-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռք բերել «Բժշկական թանզիֆ /մարլյա/ 5մ»՝ թելի լայնությունը 40S, գործվացքի խտությունը 26x18, 100% բամբակ, երկարությունը 5 մետր, լայնությունը 90 սանտիմետր: Չափման միավորը նշվել է՝ տուփ: Քանակը՝ 5000:

10-ից 14-րդ չափաբաժինների մասով՝ «Բժշկական ձեռնոցներ»՝ ատերիլ, միջինչափի, լատեքսից, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, ֆիրմային նշանի առկայություն: Չափման միավորը նշվել է՝ զույգ: Քանակը՝ 1000:

61-ից 63-րդ չափաբաժինների մասով՝ «Վիրակապ 5.10»՝ 5*10 Ոչ ստերիլ Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Չափման միավորը նշվել է՝ տուփ: Քանակը՝ 1000: «Վիրակապ 7.14 ստ»՝ 7*14 ստերիլ Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Չափման միավորը նշվել է՝ տուփ: Քանակը՝ 2000: «Վիրակապ 7.14 ոչ ստ»՝ 7*14 Ոչ ստերիլ: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Չափման միավորը նշվել է՝ տուփ: Քանակը՝ 2000:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով ընթացակարգի 8-րդ, 10-ից 14-րդ և 61-ից 63-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած Ընկերությունների կողմից ներկայացրած գնային առաջարկը համապատասխանում է հրավերի պահանջներին՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ն ենթակա էր նշման, քանի որ գնման առարկայի 8-րդ, 61-ից 63-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքները ընդգրկված չեն ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3005 ծածկագրի ներքո, իսկ 10-ից 14-րդ չափաբաժինները ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշման ցանկում՝ դրանով իսկ, նշված որոշման հիմքով, ապրանքները օտարելուց չեն ազատվում ԱԱՀ վճարելուց:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով ընթացակարգի 10-ից 14-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաները (տարբեր չափի բժշկական ձեռնոցներ), վերջիններիս Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև նշված չափաբաժիններով Ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, փաստում է նաև, որ քանի դեռ Պատվիրատուի կողմից հրավերի պայմանագրի նախագծին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, հստակ սահմանված չէ «ռետինե վիրաբուժական ձեռնոցներ» ապրանքատեսակը, և Մասնակիցների կողմից ներկայացված Հավելված 1.1-ից՝ առաջարկվող ապրանքի

ամբողջական նկարագրից, հնարավոր չէ ենթադրել և վերջապես հաստատված համարել, որ առաջարկվում է «ռետինե վիրաբուժական ձեռնոցներ» ապրանքատեսակը, հետևաբար դրանց չի կարող վերագրվել ՀՀ կառավարութաան 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելցված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն որոշմամբ նախատեսված արտոնությունը և Մասնակիցների կողմից այդ չափաբաժինների մասով գնային առաջարկում ԱԱՀ նախատեսելը գնահատվել ոչ իրավաչափ:

Անդրադառնալով «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով ընթացակարգի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 8-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկային («Բժշկական թանզիֆ /մարլյա/ 5մ»), ուսումնասիրելով Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև նշված չափաբաժնով Ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, դրանք համադրելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասին» 18.10.2016թ.-ի թիվ 101 որոշմամբ նախատեսված ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով սահմանված դիրքում ընդգրկված ապրանքատեսակի հետ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ հնարավոր չէ փաստել 8-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկային ԱՏԳ ԱԱ 3005 ծածկագրով սահմանված դիրքի համար նախատեսված արտոնության վերաբերելիությունը:

Մասնավորապես՝ «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-21/04» ծածկագրով ընթացակարգի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 8-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկան՝ «Բժշկական թանզիֆ /մարլյա/ 5մ» և վերջինիս սահմանված տեխնիկական բնութագրերից հնարավոր չէ եզրահանգել, որ պահանջվող 5մ բժշկական թանզիֆը դասվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005 ծածկագրով սահմանված ապրանքատեսակին, այն է՝ թանզիֆ՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում, որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար:

Վերը նշված՝ դասակարգչի 3005 ծածկագրով սահմանված ապրանքատեսակով սահմանված նկարագրում առկա տարրերից և ոչ մեկ չի համապատասխանում՝ նույնանում, Հավելված 1-ով և Ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առկա ապրանքի ու չափորոշիների հետ:

Վերոնշյալ պատճառաբանությունները վերաբերելի են նաև բողոքով վիճարկման առարկա հանդիսացող Ընթացակարգի 61-ից 63-րդ չափաբաժիններին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ-ի կողմից 04.03.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/13 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**